ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈԶ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ (1986 թ. հունվարի 6)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ»:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ,

Աստվածադիր մեծասքանչ կարգով, մեր երկրագունդը մի անգամ ևս իր պտույտը կատարեց արևի շուրջ: Ու ահա այս պահին, Նոր տարվո լուսաբացին, մենք տոնախմբում ենք հիշատակը սուրբ Ծննդյան մեր Փրկչի Հիսուսի Քրիստոսի, որ շատ տարիներ առաջ երկիր իջավ ու ծնվեց Բեթղեհեմ կոչված փոքրիկ գյուղում, մի մսուրի մեջ, կույս Մարիամից: Նրա ծննդյան գիշերը աշխարհը լցվել էր հրաշքներով բաղում: Բեթղեհեմի երկնակամարի վրա մի աստղ էր շողափայլել, բացվել էին դռները երկնքի, ու հրեշտակները շեփորել էին համայն աշխարհին ավետիսը մեծ, աշխարհասասան՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Եվ հուսացյալ մարդիկ, փրկարար մի լույս որոնող հոգիներ, ծարավի խաղաղության և արդարության, տեսել էին այդ լուսափայլ աստղը ու լսել քաղցր երգը հրեշտակների: Այդ գիշեր երկինքը արձագանքել էր խոնարհ ու տառապող մարդկանց դարավոր սպասումին: Ծնվող Հիսուս նրանց սպասած Փրկիչն էր, Մեսիան:

Այդ օրվանից սկսվեց մարտը լույսի և խավարի միջև, սիրո և ատելության միջև, խաղաղության և քաոսի միջև, արդարության և բռնակալության միջև: Մարդու կյանքում և աշխարհի պատմության մեջ Հիսուս եղավ ու երկու հազար տարիներից ի վեր մնաց առաքյալը սիրո և խաղաղության, մնաց՝ «ճանապարհը, ճշմարտութիւնը և կեանքը» բոլոր հուսացյալ հոգիների:

Հիսուս ծնվեց խաղաղության ավետիսի շեփորումով: Հիսուս խաչափայտի վրա իր հոգին ավանդեց՝ մարդկությանը թողնելով իր խաղաղությունը: Նրա վերջին պատգամը եղավ՝ «Խաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ» (Հովհ. ԺԴ 27):

Խաղաղությունը որ Հիսուս թողեց մեզ, մանավանդ հոգու խաղաղությունն է, որը հանդիսանում է հոգեբանական հիմքը բոլոր տեսակի խաղաղ դրսևորումների մարդկային կյանքում: Մարդ, նախ պիտի ունենա ներքին խաղաղ հոգեվիճակ, որպեսզի կարողանա խաղաղ ու հավասարակշռված մնալ իր զգացումներով, իր մտածումներով և իր ձեռաց գործերով: Այսպիսի հոգեվիճակով է միայն, որ նա կկարողանա խաղաղություն ներշնչել ու տարածել իր ընտանեկան հարկի տակ, իր ընկերային հարաբերությանց մեջ, իր եկեղեցական համայնքային կյանքում, իր աշխատանքի վայրում, իր քաղաքացիական պարտականությանց ճանապարհին:

Մեր երկրային կյանքում Հիսուսի հոգու խաղաղությունը արտահայտվում է՝ հոգու ներքին ներդաշնակությամբ, սիրով, գութով և ներողամտության ոգով դեպի մեր նմանները, հոգատար արդար վերաբերումով դեպի զրկյալներն ու հալածյալները: Հիշեցեք Հիսուսի վերջին խոսքերից՝ «Հաստատուն կացէք ի սէր իմ» (Հովհ. ԺԵ 9): Այդպես է, որ մեր սեփական խաղաղ հոգուց կարող է ճառագայթել մեր շուրջը՝ սեր և խաղաղարար լույս մեր նմանների հետ մեր հարաբերությանց ճամբին: Իրոք, խաղաղ ու հավասարակշիռ հոգեվիճակը, խաղաղարար գործը ինչքա՜ն շինարար, ինչքա՜ն փրկարար գործոններ են հանդիսանում ընտանեկան, ընկերային և եկեղեցական կյանքում: Ինչքան ցավոտ հարցեր բարվոք պիտի լուծվեին մեր Եկեղեցու ծոցում, մեր թեմերում ու համայնքներում, եթե բոլորս, բոլոր պատասխանատու հոգեվորական ու աշխարհական պաշտոնատարները մտածեին ու գործեին խաղաղ հոգեվիճակով, համերաշխության ոգով, սիրով և ներողամտությամբ դեպի իրենց գործակիցները, դեպի հավատացյալ մեր ժողովուրդը, ամեն բանից վեր դասելով Եկեղեցու շահը, Եկեղեցու հեղինակությունը: Մեր ջերմագին իղձն է բարի հրավեր ուղղել մեր Մայր Եկեղեցու բոլոր եկեղեցական սպասավորներին և բոլոր մեր հոգևոր կավակներին, խաղաղ հոգով ու մտքով գործել եկեղեցու կամարների ներքև և այդ հոգեվիճակով լուծել իրենց առաջ դրված հարցերը, չի այնտեղ, ուր տիրում է խաղաղ գործակցություն եղբայրների միջև, այնտեղ իջնում է Տիրոջ օրհնությունը:

Սուրբ Ծննդյան խորհուրդով օծուն այս հանդիսավոր պահին, մեր մտածումը, մեր քրիստոնեական խիղճը մեզ մղում են վերստին աղոթելու, որ քրիստոսավանդ խաղաղության պատգամը լսելի դառնա մեր օրերի համայն մարդկությանը, հատկապես մեծ ազգերի պատասխանատու ղեկավարներին, որպեսզի գործեն խաղաղարար ոգով և ազգամիջյան անհամաձայնությունները լուծեն խաղաղ ճանապարհներով, համբերատար համերաշխ գործակցությամբ, երբեք զենքի ուժերի չդիմելու վճռականությամբ:

Միջազգային իրավունքի և բարոյականի հրամայականն է՝ հարգել տառացի կերպով քառասուն տարիներ առաջ Սան Ֆրանցիսկոյում Միացյալ Ազգերի կնքած մեծ ուխտագիրը, որի առաջին հոդվածում՝ ասված է. «Մենք, միավորված ազգերի ժողովուրդներս, վճռել ենք պահպանել ապագա սերունդների կյանքը պատերազմի աղետից, որը մի մարդու կյանքի տևողության ընթացքում երկու անգամ անպատմելի տառապանքներ պատճառեց մարդկությանը»: Ապա ուխտագիրը ավելացնում է. «Այդ նպատակով ուխտում ենք ցուցաբերել հանդուրժողություն, ապրել խաղաղությամբ մեկս մյուսի հետ բարիդրացիական ոգով, միավորել մեր ուժերը՝ պահպանելու համար միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը»:

Ահա Միավորված Ազգերի պատմական ուխտը՝ կնքված քառասուն տարի առաջ: Ահա իրավական ու բարոյական սկզբունքները, որով պարտավորված են առաջնորդվելու մեր օրերի պետությանց ղեկավարները:

Միացյալ ազգությունների այս ուխտը առավել այժմեական է մեր օրերին, երբ հանդիսատես ենք ատոմական ահռելի ռումբերի և հրթիռների պատրաստության ու տեղադրման, որոնք սպառնում են ողջ աշխարհի կործանման և մարդկության բնաջնջման: Աշխարհի բոլոր ազգերի խոնարհ վանգվածների սրտառուչ աղաղակն է՝ խաղաղություն, համերաշխություն, վինաթափում:

Ու երբ մտահոգված ենք ծանրորեն մեր օրերի միջազգային ալեկոծ կացությամբ, ատոմական ռումբերի սարսափի ներքո, չենք կարող չմտահոգվել նաև մեր Եկեղեցու, մեր ժողովրդի ճակատագրով ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի: 1915-ի ցեղասպանությունը տեսած մեր ազգի ու Եկեղեցու արդար երազանքն է այլևս երբեք ու երբեք չտեսնել որևէ պատերազմ, որևէ ցեղասպանություն, այլ ապրել խաղաղ ու անվտանգ այս արևի տակ Աստուծո օրհնության ներքո, բուժելով մեր հին վերքերը և շարունակելով կառուցել, շենացնել մեր նոր կյանքը, վերածնված մեր Մայր Հայրենիքի տարածքի վրա:

Մեր մայր երկրի ու ժողովրդի բախտը, գոյատևումն իսկ պայմանավորված են աշխարհի խաղաղության պահպանումով և մեր ազգային դատի արդար լուծումով՝ խաղաղ ճանապարհներով:

Մեր մշտական աղոթքը պիտի մնա՝ Քրիստոս Աստված մեր, տուր Քո խաղաղությունը և Քո խաչի զորությամբ խորտակիր հրեշածին գործիքները պատերազմի, խափանիր որոգայթը չարի, ցրիր խավարը ու լույս տուր հոգիներին իբրև արեգակ արդարության ու փրկիր մարդկային աշխարհը մահվան սարսափից:

Թող բարձր ու հզոր հնչի մեծ առաքյալի պատգամը. «Գիշերն մերժեցաւ և տիւն մերձեցաւ. ի բաց արասցուք այսուհետև զգործսն խաւարի և զգեցցուք զզէնս լուսոյ» (Հռոմ. ԺԳ 12) և «Ապա այսուհետև զհետ երթիցուք զխաղաղութեան և զշինութեան որ առ միմեանս» (Հռոմ. ԺԴ 19):

Եվ թող մեր հրաշաստեղծ երկրագունդը հետ այսու չտեսնի արհավիրք ու կործանում և տառապանք մարդկային կյանքում, ու աստվածադիր իր ընթացքը շարունակի արևի շուրջ խաղաղ, անվրդով ցկատարած աշխարհի:

Սիրեցյալ ժողովուրդ Մեր, այս հույզերով ու խոհերով, Ամենայն Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք ձեզ մեծ ավետիսը մեր Փրկչի Հիսուսի Քրիստոսի լույս ծննդյան և մաղթում, որ Նրա շնորհներով շեն ու պայծառ մնան ձեր աղոթքի Տները, խաղաղ ու շինարար հաջողություններով պսակվեն ձեր եկեղեցանվեր աշխատանքները, նոր եռանդով ու լավատեսությամբ լծվեք ազգապահպանման նվիրական ձեր առաքելության, կենդանի պահելով մեր նախնյաց լույս հավատքը, մեր մայրենի լեզուն, մեր ազգային մշակույթի արժեքները և հայրենաբաղձ ոգին, մանավանդ նոր սերունդների հոգիներում:

Թող մարդացյալն Աստված հեռու պահի մեր ազգն ու Եկեղեցին նոր փորձություններից, նոր աղետներից և իր պահապան աջով հավետ պահի-պահպանի նրանց խաղաղ ու անվտանգ այս արևի տակ միշտ երգ ու լույսով:

«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ». ամեն:

Փառք ծննդյան քո, Քրիստոս Փրկիչ մեր: